

Դպրոցի ներքին գնահատման

Հաշվետվություն

2014-2015 ուստարի

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան

Ֆիզմաթ հատուկ դպրոց,

ՀՀ ք.Երևան, Ազատության պող.2-րդ նրբ. թիվ 9

Հեռ. 010 20-13-10. 060 27-51-32:

Էլ-փոստ՝ info@fizmat.am

Ինտերնետային կայքի հասցեն՝ <http://physmath.schools.am>

ԵՊՀ-ին առըներ Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հաստուկ դպրոցի ներքին գնահատման 2014-2015 ուստարվա հաշվետվությունը ամփոփված է 54 էջերի վրա՝ 37 աղյուսակներում:

Աղյուսակներին հետևում են մեկնաբանություններ և վերլուծություններ՝ աղյուսակում ընդգրկված չափանիշների շրջանակներում:

Ստորև ներկայացվում է հաշվետվության համառոտագրությունը, աղյուսակների մեկնաբանությունները և վերլուծությունները: Վերջում ամփոփ ներկայացված է դպրոցի ՈւԹՀՎ ինքնավերլուծությունը, որտեղ ընդհանրացված են դպրոցի ուժեղ (Ու), թույլ (Թ) կողմերը, ինչպես նաև չօգտագործված հնարավորությունները (Հ) ու հնարավոր վտանգները (Վ):

1. *Դպրոցի 7, 8 և 10-րդ դասարանների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է տվյալ տարիքային խմբի դիմորդների պատրաստվածության աստիճանով, իսկ ամբողջ դպրոցում դասարանների ընդհանուր թիվը մնում է անփոփոխ:*
2. *Ամբողջ դպրոցում սովորողների 2 %-ի սահմաններում աճը հիմնականում պայմանավորված է հիմնական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների 20 և 40 տոկոսանոց աճով: Մոտ 20 %-ով նվազել է 10-րդ դասարան ընդունվածների թիվը:*
3. *Վերջին երկու տարիների ընթացքում դիտվում է աշակերտների թվաքանակի աճ 1%-ի սահմանում: Տարվա ընթացքում ընդունված աշակերտների թիվը նախորդ տարվա հետ համեմատած նվազել է 13 %-ով, իսկ հեռացածներինը՝ մոտ 40 %-ով:*
4. *Վերջին երեք տարիների ընթացքում ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը նվազել է 2 %-ի սահմաններում՝ մնալով մոտ 0,7 դրույքաչափ: Կարծում ենք՝ նման ծանրաբեռնվածությունը դրական է ազդում ուսուցման որակի վրա:*
5. *Վերջին 3 տարիների ընթացքում դիտվում է մինչև 40 տարեկան ուսուցիչների «երիտասարդացման» միտում, որը պայմանավորված է նաև սերնդափոխությամբ: Ուսուցիչների թվաքանակի փոփոխությունը դպրոցում 2014-2015 ուստարում կազմել է մոտ 2 %:*
6. *Կառավարման խորհուրդը պարբերաբար լսում և քննարկում է դպրոցին հուզող խնդիրները, հետևում է ֆինանսատնտեսական գործունեությունը նպատակին ծառայացնելուն: Ցանկալի կլիներ, որ խորհուրդը հաճախակի հանդիպումներ ունենար ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:*
7. *Դասասենյակներում սեղանները դասավորված են շարքերով, սակայն որոշ դասերի դրանց դասավորվածությունը կարող է փոխվել՝ հաշվի առնելով դասաթեման և իրականացման մեթոդիկան:*
8. *Դասասենյակներում մեկ սովորողին ընկնում է միջին հաշվով 1,5 մ² մակերես, որը նորմայից պակաս է 0,5 մ² -ով:*
9. *Համապատասխան ԱԲ և ՔՊ 2015 թ.-ի միջոցառումների պլանի՝ յուրաքանչյուր ամիս դպրոցի անձնակազմը և աշակերտները տեղեկացվում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:*
10. *Համապատասխան ԱԲ և ՔՊ 2015 թ.-ի պլանային ժամանակացույցի՝ դպրոցում կատարվել են վտանգների գնահատման և աղետների հակազդման մեխանիզմների ուղղությամբ համապատասխան միջոցառումներ:*

11. Դպրոցում առկա է ՔՊ պլան, և ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են վարժանքներ ըստ պլանի:
12. Դպրոցում ջեռուցումը իրականացվում է սկսած նոյեմբերի 1-ից մինչև մարտի 15-ը, և ամենուրեք ապահովվում է անհրաժեշտ ջերմաստիճանը: Մնացած ցուրտ օրերին անհրաժեշտության դեպքում միացվում են էլեկտրական ջեռուցիչներ:
13. Դպրոցում ջրամատակարարումը շուրջօրյա է և խստորեն պահպանվում են բոլոր սանիտարահիգիենիկ պահանջները:
14. Ճաշարանը երեք հերթափոխով սպասարկում է դպրոցում սովորող բոլոր աշակերտներին:
15. Բուժկետում առկա գույքը արդիականացման կարիք ունի:
16. Դպրոցում տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքները կրում են խմբային և անհատական բնույթ, որին մասնակցում են ուսուցիչները, աշակերտները և ծնողները: Աշխատանքները տարվել են զրույցի, խորհրդակցության, թեսթերի միջոցով: Արդյունքում լուծում են ստացել անձնական, միջանձնային փոխհարաբերությունների հետ կապված բազում խնդիրներ:
17. Պետական ավարտական քննությունների միավորների միջինը բոլոր առարկաների համար, թե՛ 9-րդ և թե՛ 12-րդ դասարաններում նկատելիորեն բարձր է տարեկան գնահատականների միջինից: Կարելի է ենթադրել, որ քննությունների ժամանակ աշակերտների հանդեպ դրսևորվել է մեղմ մոտեցում:
18. Պետական ավարտական քննությունների միավորների միջինը գրեթե բոլոր առարկաների համար, բացառությամբ ռուսաց լեզվի, թե՛ 9-րդ և թե՛ 12-րդ դասարաններում նկատելիորեն բարձր է տարեկան գնահատականների միջինից: Կարելի է ենթադրել, որ քննությունների ժամանակ աշակերտների հանդեպ դրսևորվել է մեղմ մոտեցում:
19. Քննությունների միջին միավորները 9-րդ դասարանում նախորդ տարվա հետ համեմատած հայոց լեզու, օտար լեզու և հայոց պատմություն առարկաներից նվազել են համապատասխանաբար 3 %, 2% և 13 %-ով, իսկ մաթեմատիկա, ֆիզիկա, ֆիզկուլտուրա և ռուսաց լեզու առարկաներից աճել է համապատասխանաբար 4 %, 5 % , 1 %, 1 %-ով: 12-րդ դասարանում քննությունների միջին միավորները նախորդ տարվա հետ համեմատած հիմնականում աճել են բոլոր առարկաներից (աննշան նվազել են ֆիզկուլտուրայի և անգլերենի միջին գնահատականները 1 %-ի սահմանում):
20. Ավագ դպրոցում նկատվում է գերազանց առաջադիմությամբ սովորողների նվազման միտում: Միաժամանակ պակասել է նաև ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը՝ ինչպես հիմնական այնպես էլ ավագ դպրոցում: Հիմնական դպրոցն ավարտած բոլոր շրջանավարտները շարունակել են իրենց ուսումնական ավագ դպրոցում, իսկ ավագ դպրոցի բոլոր շրջանավարտները ընդունվել են ԲՈՒՀ-եր: Մրանից հետևում է, որ դպրոցում մեծացել են <<լավ>> առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը:
Միասնական քննություններին աշակերտների մասնակցության նվազումը պայմանավորված է արտերկրի բուհեր ընդունվելու հանգամանքով:
21. Բոլոր մակարդակներում զգալիորեն մեծացել է առարկայական օլիմպիադաների մասնակիցների և մրցանակներ ստացողների թիվը: Հատկապես մեծ է միջազգային օլիմպիադաներին մասնակցության աճը, որն ավելացել է մոտ երկու անգամ:
Դպրոցում բնագիտամաթեմատիկական առարկաների նկատմամբ հակում ունեցող երեխաների մոտ նկատվում են մարզական և մշակույթային ոլորտում մասնակցության և մրցանակակիրների թվի աճ:

22. Տարեցտարի ավելանում է դպրոցում տարրակարգ և գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը: Դասավանդող ուսուցիչների մոտ քառորդը դասագրքերի, մեթոդական ձեռնարկների և այլ գիտահետազոտական աշխատանքների հեղինակներ են: Ուսուցչական անձնակազմի գործունեության ամենասկզբում հաջողությունը աշակերտների մասնակցությունն է միջազգային առարկայական օլիմպիադաներին և մրցանակային բարձր տեղեր զբաղեցնելն է: Գրեթե բոլոր ուսուցիչները կիրառում են ժամանակակից մեթոդներ և օգտվում են ՏՀՏ-ներից:
23. Գրադարանը ժամանակակից տեխնոլոգիաներով հարստացման կարիք ունի:
24. Դպրոցի ֆիզիկայի, քիմիայի, համակարգչային և ռոբոտաշինության լաբորատորյաները օրինակելի են և բավարար չափով հագեցված(բացի վերջինից):
Դպրոցի շենքային պայմաններից էլնելով՝ առայժմ չկան կենսաբանության, աշխարհագրության և պատմության կաբինետներ: Օտար լեզուների կաբինետը կարիք ունի ընդարձակման և տեխնիկական վերազինման:
25. Արտաբյուջետային միջոցները ունեն նվազման միտում ողջ բյուջեյի կազմում: Զգալիորեն ավելացել են ծնողների դրամական ներդրումները, սակայն բյուջեյի ծավալի համեմատ այն տոկոսային առումով նվազել է:
Դիտվում է տարեկան աշխատավարձի ավելացում (մոտ 2%) և կոմունալ ծախսերի մեծացում, որը պայմանավորված է նաև գազի և հոսանքի թանկացումներով: 2014-2015 ուստարում 10 %-ով ավելացել է գույքի ձեռքբերումը:
26. Չնայած այն հանգամանքին, որ ներառական կրթությունը առայժմ ամրագրված չէ դպրոցի զարգացման ծրագրում, սակայն մեզ համար ընդունելի են նրա գաղափարախոսությունը և աշակերտների հավասար իրավունքների պահպանումը, ինչպես նաև սոցիալապես խոցելի խավերի երեխաներին աջակցելը: Ներառական կրթության նկատմամբ ուսուցիչների դրական դիրքորոշման նշված արդյունքը հիմնված է բանավոր հարցումների վրա:
27. Դպրոցում ԿԱՊԿ ունեցող աշակերտներ չկան: Չնայած նրան,որ դպրոցում տղաների թիվը զգալիորեն մեծ է աղջիկների թվից,այնուամենայնիվ աշխտրհրդում սեռերի հավասարության գործակիցը մեծ է դպրոցի գործակիցից:
Վերջին երեք տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ունեցող տղաների թիվը նվազում էլ է և ավելացել է անբավարար գնահատական ունեցող տղաների թիվը: Այդ ընթացքում տղաների բացակայությունը 1,5 անգամ մեծ է աղջիկների բացակայություններից և մնացել է գրեթե անփոփոխ:
28. Դպրոցի աշակերտները պատրաստակամ են մասնակցելու դպրոցում իրականացվող ծրագրերին և միջոցառումներին:
29. Աշխտրհրդի գործունեության շնորհիվ սովորողների մոտ աճել է ինքնավար գործունեության ցուցանիշը, առաջարկությունների և նախաձեռնությունների թիվը: Նաև նկատվում է պարտականությունների նկատմամբ պատասխանատվության աճ:
30. Ծնողական խորհուրդը իր լիազորությունների սահմաններում կատարում է իր առջև դրված պարտականությունները: Առաջիկայում համագործակցային աշխատանքներ իրականացնելով աշխտրհրդի և մանկխորհի հետ՝ էլ ավելի կբարելավվի ծնողխորհրդի աշխատանքը:
31. Դպրոցի պայմանները նպաստավոր են համայնքային ռեսուրս կենտրոն դառնալու համար: Սպորտային հրապարակները և կանաչ տարածքները ամբողջությամբ օգտագործվում են համայնքի կողմից:
Դպրոցը ակտիվորեն համագործակցում է հանրապետական և միջազգային տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ների հետ:

Դպրոցի ՈւԹՀՎ վերլուծությունը

<p>Ուժեղ կողմեր</p> <p>1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր.</p> <p>Վարչական մասում</p> <ul style="list-style-type: none"> • Թիմային, համագործակցային աշխատանք, • բարձր պատասխանատվություն, • աշխատանքային փորձ, • նորարարական հմտություններ, • կրթական անկաշկանդ միջավայրի ապահովվում: <p>Ուսումնաօժանդակ մասում</p> <ul style="list-style-type: none"> • Պարտաճանաչություն, • պատասխանատվություն, • մարդասիրական վեհ զգացումներ: <p>Ուսուցչական կազմում</p> <ul style="list-style-type: none"> • Մասնագիտական բարձր որակ, • մանկավարժական հմտություններ, • աշակերտի հաջողության գնահատում և տարածում, • կրթական նոր միջավայրում արդյունավետ գործելու հմտություն: <p>2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Սովորողների օլիմպիական խմբակների թիմային աշխատանք, • գիտելիքների ձեռքբերման ձգտում, • սպորտային նվաճումներ, • ակտիվ մասնակցություն մշակութային գործընթացին: <p>3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Երեխաների՝ կրթության հանդեպ մեծ պատասխանատվություն և օժանդակություն, • կրթական և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում, • դպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցություն: <p>4.Ռեսուրսներով ապահովվածությունը</p> <ul style="list-style-type: none"> • Բարձրակարգ մանկավարժներ, • բավարար նյութատեխնիկական բազա, • բավարար ֆինանսական միջոցներ: <p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ</p>	<p>Թույլ կողմեր</p> <p>1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր.</p> <p>Վարչական մասում</p> <ul style="list-style-type: none"> • Վարչական աշխատանքի համատեղումը մասնագիտականի հետ: <p>Ուսումնաօժանդակ մասում</p> <ul style="list-style-type: none"> • Տարիքային բարձր խումբ, • մասնագիտական որակների պակաս: <p>Ուսուցչական կազմում</p> <ul style="list-style-type: none"> • Կրկնուսույցի դերում հանդես գալը: <p>2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Թույլ ունակության աշակերտներից դպրոցից ազատվելու անհնարինություն: <p>3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհուրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի աշխատանքների հանդեպ անտարբերության դրսևորում, • խորհուրդների ոչ համագործակցային աշխատանք, • դպրոցավարությանը ոչ կոմպենստենտ լինելու հանգամանքը: <p>4.Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնական և ուսումնաօժանդակ տարածքների պակաս, • լեզվուների ուսուցման, աշխարհագրության, պատմության, կենսաբանության լաբորատորիաների պակաս, • ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների պակաս, • ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից նոր տեխնոլոգիաների և հմտությունների
----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> • Բոբրոտաշինության լաբորատորիայի ստեղծում, • Մասնագիտական (ֆիզիկա, մաթեմատ., ինֆորմատիկա) ծրագրերի ստեղծում, • ՏՀՏ կենտրոնի հիմնում և նոր ծրագրերով ուսուցման կազմակերպում, • http://olymp.am կայքի հիմնում և վարում, • օլիմպիադաների դպրոցական և մարզային փուլերում համացանցի կիրառում, • մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների գիտաժողովների պարբերաբար անցկացում: <p>6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը</p> <ul style="list-style-type: none"> • Օլիմպիադաների կազմակերպման հարցով հանրապետության բոլոր դպրոցների հետ խորհրդակցության ապահովում, • Հայաստանում օլիմպիական շարժման համակարգում, • Դաստիարակչական աշխատանքներում անհատական մոտեցում: <p>7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի բյուջեի արդյունավետ օգտագործում, • արտաբյուջետային գումարների հայթայթում և նպատակային օգտագործում, • վարձակալությամբ տրվող տարածքից ստացվող եկամուտների նպատակային օգտագործում: 	<p>կիրառման բացակայություն:</p> <p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը</p> <ul style="list-style-type: none"> • Նորագույն մոտեցումների կիրառելիության անհամապատասխանություն եղած ֆինանսների հետ, • համապատասխան տեխնոլոգիաների բացակայություն՝ պայմանավորված ֆինանսների սղությամբ: <p>6. Հաղորդակցություն, համագործակցություն</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի հաստիքների և որակյալ մասնագետների պակաս, • լայն առումով հաղորդակցման համար ֆինանսների սղություն, • օտար լեզուների վատ իմացություն: <p>7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցի բյուջեի և ֆինանսական այլ աղբյուրների սահմանափակ լինելը, որը չի ապահովում նվազագույն պահանջների իրականացմանը, • դպրոցի ֆինանսական ծախսերի և գնումների հետ կապված օրենսդրական դժվարություններ, որոնք բացասական ազդեցություն են ունենում դպրոցի գործունեության վրա:
<p>Հնարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> • Նախկին շրջավարտների ներգրավում դպրոցի գործունեությանը, • ծնողական համայնքի հնարավորությունների առավել օգտագործում, • սփյուռքի հայկական դպրոցների հետ համագործակցություն, • դպրոցի միջազգային ճանաչման ապահովում, • ՀԿ-ների հետ սերտ համագործակցություն: 	<p>Վտանգներ</p> <ul style="list-style-type: none"> • Երկրի տնտեսական վիճակի վատթարացում, որի հետևանքով կրթությանը հատկացվող ֆինանսական և նյութական միջոցները պակասում են, • երկրում հանրակրթության մակարդակի վատթարացում, որն իր բացասական հետևանքն է ունենում աշակերտների ընտրության հարցում, • Արտագաղթի հետևանքները դպրոցի վրա: